



ՍԵՐՈՒՅ ԱՇՈՏԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Լրացավ ականավոր լեզվաբան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Աշոտի Գալստյանի ծննդյան 80-ամյակը:

Ծնվել է 1929 թ. Կապանի շրջանի Կեմանց գյուղում: 1947 թ. ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը, իսկ 1952 թ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1953-56 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: 1962 թ. վերադարձել է մայր համալսարան և արդեն շուրջ կես դար աշխատում է հայոց լեզվի ամբիոնում: 1987 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, և նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Պրոֆ. Ս. Գալստյանն իր բազմամյա բեղմնավոր գործունեության ընթացքում հաջողությամբ համատեղել է դասախոսական, վարչական ու գիտահետազոտական աշխատանքները: Այսպես, 1964-70 թթ. և 1980-82 թթ. եղել է բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-1979 թթ.՝ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան, 1971-1980 թթ.՝ նույն ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Լայն է պրոֆ. Ս. Գալստյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա հայերենի գրեթե բոլոր բաժիններին վերաբերող բազմաթիվ մենագրությունների, ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի, տարա-



բնույթ բառարանների և մի քանի տասնյակ հոդվածների հեղինակ է: Ահա դրանցից մի քանիսի համառոտ բնութագիրը. հայոց գրական նոր լեզվի՝ աշխարհաբարի պատմության է նվիրված «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» (1963 թ.) աշխատությունը, որտեղ հանգամանորեն քննվում են գրապայքարի ընթացքը արևելահայ իրականության մեջ:

Իրեն հատուկ ջանասիրությամբ հավաքած փաստական հարուստ նյութի հիման վրա զբաղվելով ժամանակակից հայերենի ածանցների համակողմանի հետազոտությամբ՝ Ս. Գալստյանը լեզվագիտության վերջին նվաճումների հաշվառմամբ նախ՝ առանձին ուսումնասիրություններով ներկայացրել է ածանցման ու ածանցների մասնավոր հարցերը («Հումանշությունը և ածանցների հումանշային շարքերը» (1974 թ.), «Գոյականական հիմքերից ածականներ կազմող ածանցները ժամանակակից հայերենում» (1975 թ.)), ապա հրատարակել «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» մեծար-

ժեք մենագրությունը, որտեղ կատարում է ածանցների իմաստաբանական, ձևաբանական, բառակազմական քննություն, գնահատում բառակազմական բոլոր հնարավոր կաղապարները, նշում դրանց կիրառական-գործառական արժեքը, անում տեսական կարևոր եզրակացություններ:

Հենց այս գիտական արժանիքների համար էլ բարձր գնահատվելով մասնագետների կողմից՝ այն որակվեց որպես նոր խոսք հայ լեզվաբանության մեջ և հեղինակին շնորհվեց բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

Հատկապես մեծ է պրոֆ. Ս. Գալստյանի վաստակը հայ բառարանագրության բնագավառում: Նոր տիպի բառարանագրական աշխատություն է 1975 թ. լույս տեսած մասնագիտական-բացատրական, բազմալեզվյա «Լեզվաբանական բառարանը» (համահեղինակներ՝ Հ. Պետրոսյան, Թ. Ղարաբուլյան), որի բառացանկն ընդգրկում է ոչ միայն հայ լեզվաբանական-քերականագիտական եզրերը՝ սկսած V դ. մինչև նորագույն ժամանակները, այլև ընդհանրապես ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ տարածված եզրույթաբանությունը, աշխարհի լեզուների ու գրատեսակների անվանումները:

Այդ տեսակետից ոչ պակաս արժեքավոր է նույն թվականին հրատարակած, ավելի քան 20 հազար դարձվածքային միավոր պարունակող «Հայոց լեզվի դարձվածքաբանական բառարանը» (համահեղինակությամբ՝ Ա. Սուքիասյանի), որն ընդգրկում է ինչպես արդի գրական հայերենի, այնպես էլ ժողովրդական, գավառական-բարբառային այն դարձվածքները, որոնք լայնորեն թափանցել են գեղարվեստական գրականության մեջ կամ գործածվում են ժողովրդախոսակցական լեզվում:

Իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում շուրջ 150 հազար բաղադրյալ բառ պարունակող «Հայոց լեզվի բառակազմական բառարանը», որտեղ ըստ առանձին բաղադրիչի տրվում են յուրա-

քանչյուր բաղադրության կառուցվածքը, բաղադրյալ բառի աստիճանական կազմությունը, բաղադրության կազմում առաջին անգամ հանդիպող բառարմատի ստուգաբանությունը, բաղադրիչների հնչյունավորության բոլոր դեպքերը, ինչպես նաև արվում գլխաբառի քերականական, ոճական, գործառական նշումներ ու բնութագրումներ:

Պրոֆ. Ս. Գալստյանի եռանդուն մասնակցությամբ տպագրության է պատրաստվել «Արդի հայերենի բացատրական նոր բառարանը», որը պարունակում է արդի գրական հայերենի երկու տարբերակների շուրջ 250 հազար բառ ու դարձվածք:

Այս ամենի հետ մեկտեղ պրոֆ. Ս. Գալստյանը արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի սփյուռքահայ ուսանողության համար հեղինակել է հայերենի արժեքավոր դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ուսուցողական և տեղեկատու նյութեր և այլն:

Ի լրումն ասվածի՝ հարկ է նշել, որ պրոֆ. Ս. Գալստյանը թե՛ որպես գործուն հեղինակ, թե՛ որպես խստապահանջ ու բարյացակամ գրախոս, թե՛ որպես խմբագրական խորհրդի պատրաստական ու պարտաճանաչ անդամ և թե՛ որպես սրտացավ ու բժախնդիր ընթերցող մեծ վաստակ ունի «Բանբերի» ինչպես բովանդակային, այնպես էլ լեզվական մակարդակի բարձրացման գործում:

«Բանբերի» խմբագրական խորհուրդը և աշխատակազմը, օգտվելով պատեհ առիթից, խորին շնորհակալություն է հայտնում վաստակաշատ գիտնական, հմուտ մանկավարժ ու հոյակապ մարդ պրոֆ. Ս. Գալստյանին, շնորհավորում իմաստալից ու արգասավոր կյանքի չորս քսանամյակը, ցանկանում անփոփոխ առողջություն, երկար տարիների կյանք և գիտական, մանկավարժական ու մարդկային նույնալիսի արգասավոր գործունեություն:

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԳԵՍԻ
ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**